ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ Ս. ՅԱՎՐՅԱՆԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 23.09.2009Թ. ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԹԻՎ 4-244 ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ սահմանադրական դատարանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 5-րդ մասի, աշխատակարգային նիստում քննելով ՀՀ դատական օրենսգրքի 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382 հոդվածի 3-րդ մասի, 385 հոդվածի 2-րդ մասի և 394 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ քաղաքացի Ս. Յավրյանի դիմումը քննության ընդունելու մասին հարցը, **ՊԱՐԶԵՑ.**

1. Քաղաքացի Ս. Յավրյանը դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ դատական օրենսգրքի 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382 հոդվածի 3-րդ մասի, 385 հոդվածի 2-րդ մասի և 394 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների սահմանադրականությունը:

2. ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետում նախատեսված է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը, մինչդեռ դիմումում վիճարկվող՝ ՀՀ դատական օրենսգրքի 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382 հոդվածի 3-րդ մասի, 385 հոդվածի 2-րդ մասի և 394 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները վերջնական դատական ակտով չեն կիրառվել դիմողի նկատմամբ:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69 հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

Քաղաքացի Ս. Յավրյանի դիմումի քննության ընդունումը մերժել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 հոկտեմբերի 2009 թվականի
ՍԴԱՈ-91